օրէնքով եթէ ուսումնարանի գոյութիւնը կախծեալ լինի, դարձեալ գումարն է սեպհականութիւն հոգևորականութեան, միայն այն պայմանով, որ Հոգևոր կառավարութիւնն այդ գումարը ծախսելիս այլ նպատակների համար պարտ է իւրաքանչիւր դիպուածքում խնդրել թոյլտուութիւն Ներքին գործոց նախարարի կողմից։ Ցանկանում ենք մեր հոգևոր կառավարութեանը յաջողութիւն այդ գործում։

~~~~~~~~

ՆՊԱՍՏ.

Ինչպէս Ամսագրոյս օգոստոսի թերթին մէջ հրատարակեցինք Պաւլոխմոյ Հայոց դպրոցին նպաստողաց անուանքը, այս անգամ կյաւելումք հրատարակել հետևեալներուն անուանքը ևս։

	Թում.	Ղրան*)
Ալլէկ Կրէյնֆիլդ	100	
Դանիէլ Մ. Շահրազեանց	100	
Սողոմոն Բէժոյեան	50	
Թովմաս Ճելալեան	20	
Սողոմոն խան Սաղինեանց	20	
Ասլան Խաւար Էնակոլոփեանց	20	
Կարապետ Մանուէլեան	15	
Դաւիթ Սարգսեան	14	
Եսայի Մանուկի Աստուածատուրեան	12	
Մկրտիչ Ջոհրաբեան	10	
Ստեփան Կ. Նէրսեսեանց	10	
Յակոբ Բ. Թամիրեանց	7	
Խաչատուր Ցէթաղեան	7	
Արզուման Հայրապետեան	6	
Անտոն Փօրէսի, Ցոյն	5	
Աւետիս Յովհաննէսեան	5	
Մկրտում Առաքելեան	4	
Սարգիս Մկրտչեան	5	
Գևորգ Համբարձումեան	5	
Յոհան Յակոբեան	2	
Ծատուր Էյվազեան	2	
Ծատուր Մնացականեան	2	
Սարգիս Հայրապետեան	2	
Բաղդասար Մանուկի Դաւթեան	2	
Մինաս Գրիգորեան	1	
Դաւիթ Ալբէչեան	2	5
Սարգիս Գրիգորեան	—	7
Գումարն է	425	2

(*) Մի ղռանն արժէ 28 1/2 կոպէկ արծաթ Ռուսիոյ։

~~~~~~~~

ՇՆՈՐՀԱԿԱԼԵԱՑ ԳԻՐ.

Յանցելումս՝ Վ. եհ. Հայրապետ Հայկ. 12 ամսոյն տասէն հանդերձ նորոգն և այլ պարագայիւք՝ ութն փութի չափ տառ ընծայած էր ի ձեռն հոգեզգօն Մամբրէ Եպիսկոպոսի Մամիկոնեանց, և յիշեալ Եպիսկոպոսն զայն ի Մուշ Գլակայ հռչակաւոր վանուց յանձնած լինելով, այս անգամ յիշեալ վանուց Միաբանութիւն յատկապէս առ Վ. եհ. Հայրապետ հետևեալ շնորհակալեաց գիրը ուղերձեալ էր, զոր արժան կհամարիմք հրատարակելոյ։

ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի ժամանակին՝ յորում՝ ձոխանայր յաշխարհի ահեղ պետութիւնն Արշակունեաց արքայութեան, փառք գերագոյն քան զաշխարհի ցոլացաւ ի վերուստ յազգս Հայոց. քանզի Տէրն փառաց իւր Միածին Որդին Աստուծոյ էջ յերկնից դնել զհիմունս անվախճան թագաւորութեան, բարձրացուցանել յԱրարատեան աշխարհի զգլուխս սրբոյ Սիօնի Հայաստանեայց զՀարսն լուսոյ զԿաթուղիկէ Մայրն ամենայն Եկեղեցեաց զՍուրբ Էջմիածինն ասեմք, որում արժանապէս փեսայացեալդ էք յԱթոռութենէ և ի հրաւիրանաց սուրբ Հոգւոյն։

Այցին դալք բաղումք, անկան կործանեցան աշխարհային փառք մեր, գաւազանն արքունի, քաղաքք հոյակապ, քաջք արի արանց և պարծանք յաղթական զօրավարացն մերոց, այլ յայսմ ամենայնի օրհնեալ եղիցի անուն Տեառն՝ որ անհուն գթութեամբ իւրով դարձեալ ոչ խապառ անտես արար զմեզ, այլ զՏունն յաւիտենական փառաց՝ զյլուրմէ հիմնադրեալն եթող մեզ կոթող մխիթարութեան առ հնապանծ յաւերժական ծերունի լերամբն Մասեաց բարձրացելոյ առաջի յաւիտենականին իբրև զսեղան խնկոց և պատարագաց ի յիշատակ փառաց և ի պարծանս մշտնջենաւոր յազգաց յազգս, յորում Վեհափառութիւն Ձեր Քահանայապետ աղօթանուէր և քաջարար ժողովրդեանն Աստուծոյ կանգնեալ կայ իբրև զջահ լուսապայծառ և փառաւորեալ ի զարդ անկողոպտելի։ Բայց տեսանելով Վեհափառութեան Ձերում զմանկունս Եկեղեցւոյ ի խաւարի տգիտութեան, զԵկեղեցիս՝ զդստերս Մայր Աթոռոյ ի խրթնացեալ վիճակի և զպակասութիւն բանիբուն և հոգևոր պաշտօնէից՝ չէր մարթ հանդարտել վսեմախոհ ոգւոյ Ձերոյ, վասն որոյ զփոյթ մեծ և ճիգն յանձին կալեալ շուրջ ընդարձակ և գեղեցիկ հորդել ի յառաջադիմութիւն և ի լուսաւորութիւն մանկանց Հայաստանեայց Եկեղեցւոյ. որով բերկրեցան ոգիք համայն որդւոցն Սիոնի։

Ոչ ոք է՝ որ ունիցի աչս ի գլուխ, և ուշ ի խելապատակ, և ոչ տեսանիցէ այսօր զարդիւնաւոր ազդալոյս ջանս սրբոյ Հայրապետիդ նուիրելոյ ի փառս Եկեղեցւոյ, քանզի ընդ ձեռն Ձեր ճառագայթ փայլչութեան Հարսին լուսոյ ընդ ամենայն տեղիս հարկանէ. առ ձեօք նորանոր բարեկարգութեամբք և շինութեամբք բարգաւաճեալ ճոխացաւ Մայրն լուսածին և որովք կաթողին ի Ձեզ ձգեցիք զսիրտս հարազատ որդւոցդ սփռելոց ընդ չորեսին ծագս աշխարհի. որք զհաւատտիս ճշմարիտ սիրոյ և համակրութեան յայտնեցին առ Մայր Աթոռն՝ ամօթապարտ թողեալ զխորթամիտս ոմանս և խայտառակեալ զնենգաւպատիր հնարս նոցա՝ որք դուն գործեցին զկըճիճ ատելութեան արկանել ընդ Սիոն և ընդ որդիս իւր։ Այլ Հայրապետական խնամք Ձեր և անձնուէր ջանք խցին զամենայն բերանս չարախօսս և կարկեցին զլեզուս հայհոյիչս. և ուսումնասիրական ջանք Ձեր ի դաստիարակութիւն մանկանց Եկեղեցւոյ խորագոյնս դրոշմեցին զյիշատակ երախտագիտական ի սիրտս համօրէն Հայոց՝ որք ընդ արդիւնաւոր Հայրապետս անմոռաց պահեն զնուիրական անուն Վեհափառութեան Ձերում։

Եւ արդ միաբանական Ուխտս մեծի վանուցս սրբոյն Կարապետի զերծեալ այսօր յանցելոց մրրկարեկ ծփանաց և ի յուզմանց և հասեալ ի նաւահանգիստ խաղաղութեան ընդ հովանեաւ Առաջնորդի իմաստնոյ և խաղաղասիրի, փութայ զհաւատարիմ հնազանդութիւն իւր և զխոնարհ հպատակութիւն յայտնել Վեհափառ սուրբ Հօրդ հասարակաց յարգելով զօրէնս և զհրամանս Տէրութեան Ձերում, և անձնուէր պաշտօնեայ խոստանալով լինել վասն փառաց և գերագահութեան սրբոյ Սիոնին Հայաստանեայց։

Երախտագիտական սրտիւ զխորին գոհութիւնս մեր յայտնեմք Վեհափառ ողորմած Տեառնդ ընդ մասնաւոր գութ Ձեր և շնորհ առ Խնամակնեան ուխտս սրբոյ Կարապետի և առ Գերապատիւ Վանահայր մեր, ընդ որ ձեռն ընկալաք զնուիրեալն ի Վեհափառութենէ Ձերմէ զապագրական ընտիր տառս ի չափ տասն և հինգ լտեր, որով եւ առաւել շնորհապարտ կացուցէք ըզմեզ առ Մայր Աթոռն. գոհ եմք և ըզմերմէ Գերապատիւ Վանահօրէ, որ ընդ մուտ գործելն ի վանս, ջերմագին և ընդարոյս եռանդեամբն իւրով աջակից ունելով զմիաբանութիւնս բուռն եհար զբարեկարգութենէ և զշինութենէ վանուցս. և քանզի չունիմք ի վանս ոչ զյարմարաւոր ընդարձակ ուսումնարան, ոչ զընծայարան ժառանգաւորաց Եկեղեցւոյ, ոչ զտպագրատուն, ոչ զթանգարան, և ոչ զհասարակաց սեղանատուն, ուստի վասն այսց ամենակարեւոր շինութեանց խորհուրդ ի մէջ առեալ՝ որոշեալ եմք յառաջիկայ գարնանս հիմն արկանել շինութեանցս այսոցիկ՝ վստահացեալ յօրհնութիւն և ի քաջալերութիւն Վեհափառ Սրբազնութեան Ձերում և յառատաձեռն ձեռնտուութիւն սիրելի Ազգայնոց մերոց:

Գիտէ Վեհափառ Տէրութիւնն ձեր, զի սրբոյ Կարապետի ուխտս դուստր է Կաթուղիկէ Մայր Եկեղեցւոյ ի մէջ Հայաստանի, ուստի խնդրեմք ի Ձէնջ Տէր Վեհափառ, զի ընդ յուսոյն մերոյ զբարձրացեալ Աջ Ձեր Հայրապետական յամենայն ժամ հովանի կալջիք ի վերայ վանուցս, ի վերայ Գերապատիւ Վանահօր մերոյ Տեառն Մամբրէի Եպիսկոպոսի Մամիկոնեանց՝ սիրելի որդւոյ ձերոյ և ի վերայ համօրէն ուխտիս՝ որ ընդ նմա միաբան՝ որդի խոնարհ եմք Վեհագունի սրբոյ Հօրդ, պահելով զմեզ ընդ ամրափակ թեւօք Հովուապետութեան ձերում. զի և մեք աղօթիւք և օրհնութեամբ Ձերով խրախուսեալ և զօրացեալ յառաջ ընթասցուք ի շինութիւն սրբոյ Եկեղեցւոյ և Հայրենեաց, շինելով և բարեկարգելով զդպրոցս, ի գործ դնելով զՏպարանս, և ընդարձակելով զժառանգաւորաց Վարժարանս, և պատրաստելով ի նմա զԵկեղեցական պաշտօնեայս և ուսուցիչս ըստ բաղձանաց Աստուածարեալ Վեհափառութեան Ձերում:

Որում մնամք մշտնջենաւոր որդի և հաւատարիմ ծառայ Ուխտ միաբանութեան սրբոյ Կարապետի վանուց Տարօնոյ:

(Ստորագրութիւն Միաբանից):

Յամի Տեառն 1874 ի Հոկտեմբերի 5

ի Վանս Սրբոյ Կարապետի
Տարօնոյ.

ԳԻՒՄՐԵՑԻՈՑ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԽՕՍՔԸ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ:

Ինչպէս Ամսագրոյս անցեալ Ը-րդ թուոյ մէջ հաղորդած էինք միանգամայն խոստացած՝ այսպիսի վերնագրով՝ այսինքն՝ Գիւմրեցւոց վերջնական խօսքը Ներս. Դպրոցի մասին՝ ստացեալ ըստ բաւականին մեծագիր—ընդարձակ ձեռագիր մի տետրակին վերայ մի քանի կարեւոր տեղեկութիւնք տալ հանդերձ զխոստու-